
«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷՊԻԿԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

Արդեն երրորդ անգամ «Սասնա ծռեր» հերոսավեպը նոյեմբերի 12–14-ը Երևանում էր հավաքել արդի էպոսագիտության հայ ու օտարագրի մասնագետների: Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը և Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի հայ գրականության գիտահետազոտական կենտրոնը:

Ինչպես նախորդ երկու գիտաժողովների դեպքում, այս անգամ ևս բավական լայն էին զեկուցումների թեմատիկ ընդգրկումները: Հազեցած գիտաժողովի ընթացքում տեղի և ԱՄՆ-ից, Գերմանիայից, Հնդկաստանից, Աբխազիայից ժամանած մասնագետները ներկայացրին շուրջ երեք տասնյակ զեկուցում:

Գիտաժողովը բացող զեկուցման մեջ անվանի էպոսագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս. Հարությունյանը անդրադարձավ հայ էպոսագիտության անցած ճանապարհի հիմնական հանգուցակետերին՝ առանձնացնելով զարգացման արդի փուլի կարևոր խնդիրները, որոնցից առաջինը՝ նոր համահավաք բնագրի կամ բնագրերի կազմության հարցն է: Որքան էլ մեծավաստակ գիտնականների կողմից 1939 թ. կազմված «Սասնա ծռերի» համահավաքը անգնահատելի նշանակություն է ունեցել մեր ժողովրդական վեպի մասսայականացման, համաշխարհային ճանաչման ու ուսումնասիրության համար, այդուհանդերձ, այն կազմվել է այսօր հայտնի շուրջ 160 պատումներից ընդամենը 60-ի հիման վրա: Հետևաբար, նոր ու առավել հիմնավոր ուսումնասիրությունների համար անհրաժեշտ է արդեն հրատարակված բոլոր պատումների հաշվարկով նոր համահավաք բնագիր կազմել: Ըստ Ս. Հարությունյանի՝ ցանկալի է ստեղծել այնպիսի համահավաք բնագիր, որն ընդգրկի էպոսի տիպաբանական երեք խմբերի՝ Մշո, Մոկաց և Սասնո պատումների հիմնական հատկանիշները, իսկ առավել ճշգրտության համար անհրաժեշտ է ստեղծել երեք այդպիսի համահավաք՝ ըստ պատումների տիպաբանական երեք խմբերի: Բայց մինչ այդ անհրաժեշտ է առանձնացնել պատումների հիմնական հատկանիշները ներկայացնող միավորներ և ստեղծել համապատասխան ուղեցույցներ: Էպոսագետը նշեց, որ այսօր արդեն նման ուսումնասիրություններ կատարվում են, հետևաբար, անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել էպոսագիտության զարգացման այդ ուղղությանը, քանի որ դրանով է պայմանավորված մեր հերոսավեպի և համաշխարհային էպիկական ժառանգության զուգորդումների հիմնավորվածությունն ու գիտականությունը: Բացի այդ, անհրաժեշտ են էպոսի լավագույն պատումների գիտական բազմալեզու թարգմանություններ, ինչպիսին կատարել է ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը ռուսերեն: Այդ թարգմանությունները հնարավորություն կտան առավել լայն համեմատական ուսումնասիրություններ կատարել: Ըստ Ս. Հարությունյանի՝ անհրաժեշտ է անդրադառնալ ու համեմատական

քննությունների ոլորտում ընդգրկել նաև հայ վիպական բանահյուսության այլ ստեղծագործություններ ևս:

Ձեկուցումների մեծ մասը (ինչպես և նախորդ գիտաժողովների ժամանակ) մեր էպոսի ու տարբեր ժողովուրդների, տարբեր հնությանը վիպական ստեղծագործությունների համեմատություններ էին ներկայացնում: Այս դեպքում զեկուցումների հեղինակները հարազատ մնալով գիտաժողովի խորագրին՝ «Մասնա ծոեր»-ը ներկայացնում էին համաշխարհային վիպական ժառանգության համատեքստում:

Հայ և կովկասյան էպոսների առասպելական շերտերի համեմատությանն էին նվիրված Ա. Պետրոսյանի (Երևան), Ե. Չաքարյանի (Երևան), Ջուրաբ Չապուայի (Մուխոմ) և Շոթա Սալակայայի (Մուխոմ) զեկուցումները: Ա. Պետրոսյանը «Հայկական ու կովկասյան էպոսների հարաբերությունը» զեկուցման մեջ համադրելով «Մասնա ծոերի» և նարթական էպոսի տարբեր միջադեպեր, որոշ կերպարներ և, կատարելով հատուկ անունների ստուգաբանություն, մատնանշեց մեր ու հարևան ժողովուրդների վիպական ստեղծագործությունների նմանությունները: Ե. Չաքարյանի զեկուցումը նվիրված էր «Մասնա ծոերի» «Խաչ Պատերազմին» առասպելաբանական զուգահեռումներին, որոնք կրկին ներկայացվում էին հիմնականում կովկասյան տարբեր ժողովուրդների վիպական ստեղծագործությունների հարաբերությամբ: Աբխազական Աբրասկիլի և մեր Փոքր Մեծի համեմատությանն էր նվիրված Զ. Չապուայի զեկուցումը: Կովկասյան ժայռում փակված կամ քարից ծնվող հերոսների հետ մեր էպոսի չորրորդ ճյուղի գլխավոր հերոսի հետ համեմատությունը գիտնականը կատարում էր աբխազական էպոսի տարբերակների մանրագին քննությամբ: Շ. Սալակայայի «Հուսայի քրոնոմետր (քարի և մետաղի դերը նարթական էպոսի նախասկզբնական միջուկի թվագրման գործում)» ուսումնասիրության թեման կովկասյան ժողովուրդների էպոսների ստեղծման ու զարգացման հնարավոր դարաշրջաններն ու դրանց յուրահատուկ արտահայտություններն էին: Ի մասնավորի, գիտնականը փորձ էր անում էպոսում քարի ու մետաղի հիշատակությունների հաճախականությամբ որոշել այս կամ այն հատվածի ստեղծման ժամանակաշրջանը:

Մի ամբողջ խումբ զեկուցումներ նվիրված էին «Մասնա ծոերի» և գերմանական «Նիբելունգների երգի» համեմատությանը: Երբեմն նկատվող, վերևում նշված, համեմատվող եզրաբառերի ոչ հստակության հետևանքով որոշակի մակերեսայնությամբ հանդերձ, զեկուցումները բավական ուշագրավ էին: Դրանք տարբեր խորությամբ ու մեթոդներով անդրադառնում էին երկու էպոսներում ասպետականության էթիկայի յուրահատուկ դրսևորումներին և Սաչատրյան (Երևան) «Ասպետականությունը իբրև էպիկական հերոսի էթիկայի հիմնարար հասկացություն», էպոսների դիպաշարային և գաղափարական նմանություններին ու ժանրային առանձնահատկություններին և Կարաբեկովա (Երևան), «Մասունցի Դավիթը և Նիբելունգների երգը», կերպարների վարքի ու հոգեբանական մեխանիզմների յուրահատկություններին և Մելիքսեթյան (Երևան), «Հոգեբանական նմանության մոտիվները «Մասունցի Դավիթ» էպոսում և «Նիբելունգների երգում»] և այլն: Հայ և գերմանական էպոսների զուգորդումներին նվիրված ուսումնասիրությունների առատությունը, թերևս, պայմանավորված էր այն հանգամանքով, որ վերջերս է լույս

տեսել «Նիբելունգների երգի» առաջին հայերեն բնագիրը և ուրախալի է, որ արժանացել է ուսումնասիրողների ուշադրությանը:

Գիտաժողովի ընթացքում առանձին զեկուցումներով ներկայացվեցին նաև «Մասնա ծոերի» և արաբական էպոսի նմանությունները [Ա. Փաշայան (Երևան), «Մասնա ծոերի» և արաբական էպոսի համեմատության փորձ], հայ և բենգալական վիպական ավանդույթների զուգահեռները [Ա. Ռանի Մենգուպտա (Դելի), «Վագրը Թայդ երկրում. բենգալական ժողովրդական էպոսի ավանդույթը»], մեր և հունական էպոսների որոշ հերոսների գործառնությունների ընդհանրությունները [Մ. Ֆրից (Բոնն), «Ավանդույթ, թե նորարարություն. հայկական հայտնի հերոս Ջենով Օհանը հունական էպոսի Ստենտորի և մյուս հերոսների ձայների գործառնության ֆոնին»] և այլն:

Ավելի լայն ընդգրկում ունեն Կ. Ռայխի (Բոնն) «Դավթի և Մհերի մենամարտը հնդեվրոպական հերոսական պոեզիայի համատեքստում» զեկուցումը, որտեղ գիտնականը, անդրադառնալով հնդեվրոպական վիպական բանաստեղծության յուրահատկություններին, ներկայացնում էր վիպական ստեղծագործություններում հոր և որդու կենտրոնական մենամարտի մոտիվի գործառնականությունն ու հնարավոր դրսևորումները: Մոտիվի տարատեսակ արտահայտությունները քննվում էին հիմնականում իրանական ու հայկական էպոսների համապատասխան մոտիվի հետ հարաբերությամբ:

Էպոսի ռուսերեն թարգմանություններին ու ռուսական մշակութային իրականության մեջ «Մասնա ծոերի» ճանաչմանն էր նվիրված Մ. Ջանփոլադյանի (Երևան) ուսումնասիրությունը: Անդրադառնալով էպոսի ռուսերեն թարգմանության արժանիքներին՝ ուսումնասիրողը շատ բարձր գնահատեց այն, կարևորելով, որ թարգմանիչները ոչ միայն իրենց գործին նվիրված մասնագետներ էին, այլև սիրում էին Հայաստանն ու հայերին, հիանալի գիտեին մեր մշակույթը, ինչը օգնեց նրանց «Մասնա ծոերը» սիրելի ու հարազատ դարձնել ոչ միայն Ռուսաստանում, այլև ընդհանրապես ռուսալեզու հանրության շրջանակներում:

«Մասնա ծոերի» և ծիսական ու ազգագրական տարբեր իրողությունների ու երևույթների հետ հարաբերության վերաբերյալ ուշագրավ զեկուցումներ ներկայացրին Լ. Աբրահամյանը (Երևան)՝ «Մորա Մելիքի սպանությունը ծիսաստասպելաբանական համատեքստում», Ս. Տոնոյանը (Երևան)՝ «Մեսիական կրոնների պայքարը և միթրաիզմի պարտությունը «Մասնա ծոեր» էպոսում», Վ. Դերիկյանը (Երևան)՝ «Հայոց եկեղեցու ավանդական սրբությունների հիշատակումները «Մասնա ծոեր» էպոսում» և այլք: Այս դեպքում ուսումնասիրողները ժողովրդական վեպը քննում էին հավատալիքների, ծեսերի, ապա և կրոնական տարբեր համակարգերի հետքերի ու իրացումների տեսանկյունից, չբացառելով դրանց որոշակի դերը և նշանակությունը էպոսի հնագույն միջուկի ձևավորման, ապա և հետագա զարգացման ու կայացման ընթացքում:

Մեկ այլ կարևոր խնդրի՝ հերոսավեպի բանավոր և գրավոր ավանդույթների հարաբերությանն էին նվիրված Ա. Եղիազարյանի (Երևան) և Պիտեր Քաուլիի (ԱՄՆ) զեկուցումները: Ա. Եղիազարյանը «Էպոսի գրավոր կյանքը» զեկուցման մեջ, անդրադառնալով էպոսի գոյության բանավոր և գրավոր վիճակներին, փաստեց, որ

հնագույն շատ էպոսներ պահպանվել են միայն գրառված վիճակում և այդպես հայտնի դարձել ու ուսումնասիրվել, հետևաբար, մեր էպոսը նույնպես, անկախ այն հանգամանքից, որ այսօր արդեն գրկվել է կենդանի գործառնությունից, իր կյանքը շարունակում է գրավոր վիճակում: Ըստ ուսումնասիրողի, թեև հերոսավեպը գրառվելով կտրվում է իր բուն էությունից, սակայն համազգային ու միջազգային ճանաչման և ուսումնասիրության հնարավորություն է ստանում: Պիտեր Քաուլիի «16-րդ դարի պորտուգալացի ճանապարհորդների գրառումների առնչությունը «Մասնա ծոեր» բանավոր ավանդման գործընթացի հետ» զեկուցումը նվիրված էր մեր էպոսի մասին հնագույն հիշատակություններին և էպոսի ավանդման հնարավոր վիճակին: Նորովի քննելով երկու պորտուգալացիների ճանապարհորդական նոթերը Մասունի և Մասնո իշխանների մասին՝ ուսումնասիրողը փորձել էր հասկանալ, թե ինչ վիճակում է ավանդվել ժողովրդական վեպը XVI դարում՝ արձակ, թե չափածո, ըստ այդմ՝ ճշտել ավանդված նյութի ժանրային բնութագիրը՝ ավանդություն, թե էպոս:

Առանձին զեկուցումներ ներկայացվեցին նաև էպոսի ու պատմության հարաբերության [Ս. Հմայակյան (Երևան), «Ուրարտական հուշարձանները «Մասնա ծոեր» էպոսում և հայկական ավանդություններում»], էպոսի և ազգային գաղափարաբանության առնչության [Ա. Սահակյան (Երևան), «Մասնա ծոեր» ժողովրդական վեպ (պետականության խնդիր)»] էպոսի բոլոր պատումներն ընդգրկող մոտիվային ուղեցույցի ստեղծման [Շ. Համբարձումյան (Երևան), «Մասնա ծոեր» էպոսի մոտիվային ուղեցույցի ստեղծման սկզբունքներն ու առանձնահատկությունները»] թեմաներով:

Ընթերցված զեկուցումները, ծավալված բուն քննարկումներն ու բանավեճերը փաստեցին, որ «Մասնա ծոեր» էպոսի նկատմամբ գիտական ու հանրային հետաքրքրությունը շատ մեծ է: Հայ էպոսագիտության շուրջ, 130-ամյա փորձից անկախ, կան բանավիճային բազում թեմաներ ու չլուծված խնդիրներ, որոնք նորովի քննության ու ներկայացման կարիք ունեն:

Գիտաժողովը ցույց տվեց, որ Ս. Հարությունյանի առաջադրած խնդիրներն իսկապես շուտափույթ լուծում են պահանջում, քանի որ ներկայացված զեկուցումների մեծ մասը համեմատական էպոսագիտությանն ու առասպելաբանությանն էին հարում, իսկ համեմատության աղբյուրը մեր էպոսի 1939 թ. կազմված համահավաք բնագիրն էր: Բացի այդ, միշտ չէ որ հստակ էին համեմատության միավորները: Այսպես, գրեթե բոլոր զեկուցողներն օգտագործում էին մոտիվ, միջադեպ, դրվագ ու տեքստակառուցողական այլ եզրաբառեր, սակայն դրանք չէին սահմանվում և յուրաքանչյուր դեպքում տարբեր ընդգրկումներ ունեին: Այս դեպքում, ակնառու էր էպոսի դիպաշարաստեղծ միավորները, մասնավորապես մոտիվները համակարգված ներկայացնող ուղեցույցի ստեղծման անհրաժեշտությունը: